ՆՈՐ-ԴԱՐ

№ 80 ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ Հ̈ալաթ 21 Մայիսի **1888** Հ̈ալաթ 21 Մայիսի ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 80

Տարեկան 10 րուբլի, վեց ամսոր 6 րուբլի, երեք ամսոր 3 ր. 50 կ., ամսոր 1 ր. 50 կ., Հատոր 5 կոպեկ։
Բաժանորդ գրվում են Թիֆլիսում միմիայն խմբագրատան։

Խմբագրութեան Հասցէն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրատունը բաց է ամեն օր (բացի սուն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունվում են ամեն ժամանակ։
Յայտարարութիւնների գումարն 2 կ., բեհլամների համար կրկնապատիկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող.—Ժողովրդի ընտրութեան իրաւունքի խնդիրը և մամուլը։
Քրոնիկոն.—Լուրեր։ Ծուխերի բաժանման առթիւ։
Թղթակցութիւններ.—Նկատելիներ։ Բագու։
Քաղաքական.—Լուրեր։
Խառն Լուրեր.
«Նոր-Դար»-ի հեռագիրները։
«Նոր-Դար»-ի պատասխանները։
Բանասիրական. — Աննա Սարոյեան։ (շարուն.)
Յայտարարութիւններ։

Թիֆլիս, 20 մայիսի 1888

ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ Ի-ՐԱՒՈՒՆՔԻ ԽՆԴԻՐԸ ԵՒ ՄԱՄՈՒԼԸ

—

Համոյենց եկեղեցու վէճի մասին խօսելով իր ժամանակին ասացինք, թէ հետաքրքիր է իմանալ և մամուլի այդ առթիւ յայտնած մտքերն և պաշտպանած հայեցակէտը։ Ինչ ասել է, որ իրաքանչիւր թերթ համոյենց եկեղեցու վէճի վերաբերութեամբ իր տեսակէտից զուտ և մաքուր ճըշմարտութիւնն է պաշտպանում միւսի անարդարութեան, ստութեան և սխալ կարծիքների դէմ։ Մնում է միայն ճշմարիտ «ճըշմարտութիւնը» գտնելու համար փաստերը, օրէնքները, կանոնները, եղելութիւնը մէջ բերել, բայց դրանք են, որ երկու կողմից ծածկվում են կամ ուշադրութեան չեն առնվում։ Մէկ կողմն ասում է, թէ սկզբունք ենք պաշտպանում, մինս կողմն նրա դէմ ասում է, որ այդպէս չէ, ձեզ համար միայն անձնաւորութիւններ կան։

Այսպէս դատող կողմը բոլորովին չէ նկատում, որ ինքն էլ այդ վէճի մէջ մտել է միմիայն անձնաւորութիւնները որոնելով և միմիայն անձնաւորութիւնների շահերը պաշտպանելով, գիտակցաբար թէ անգիտակցաբար, դա միևնոյն է։

Երբ մէկ կողմը միւս կողմի դէմ գնալով թողնում է համոյենց եկեղեցու երէցփոխի գործը և միայն երէցփոխի անունը տալով ուղում է կանխաւ վէճը ասելով, որ այս մարդը այս ինչ մարդու բարեկամ-ընկերն է. հասկացողի համար պարզ է, որ այդ երէցփոխը եթէ համոյենց եկեղեցուց գրախտ էլ շինէր, այդ կողմը նրան չպիտի պաշտպաներ, այլ միշտ տրամադրուած պիտի լինէր նրան վատաբանելու։ Ուրեմն ի զուր է մէկ կողմը միւսին մեղադրում, որ նա սկզբունք չէ պաշտպանում, այլ անձնաւորութիւն։ Այդ երկու միմեանց հակառակող կողմերի մէջ գովելին այն է, որ դրանք, մանաւանդ համոյենց եկեղեցու երէցփոխի դէմ յարձակուող կողմը, մեծ եռանդով պաշտպանում են ժողովրդի ընտրութեան իրաւունքը։ Բարեմիտ ընթերցողին այդ վարմունքը պէտք է ուրախացնէ, մանաւանդ, երբ նրա յիշողութիւնը թոյլ է և անցեալից ոչինչ չէ մտաբերում և շատ գործերին լաւ տեղեակ չէ։ Իսկ եթէ ընթերցողը գործերին տեղեակ անձն է և լաւ յիշողութիւն ունի, տեսնելով այսօր մի ըստ ինքեան աննշան գործի մէջ ժողովրդի ընտրութեան իրաւունքի այդպիսի եռանդագին պաշտպանութիւն—գլուխը պէտք է զայրացած շարժէ։

Եւ այդ ոչ թէ նրա համար, որ ինքը, այդ ընթերցողը, ժողովրդի ընտրութեան իրաւունքը չէ ճանաչում, ոչ թէ նրա համար, որ ժողովրդի այդ իրաւունքն այսօր մեծ եռանդով պաշտպանող թերթը մէկ չէ բացատրում, թէ Համոյենց եկեղեցու վերաբերութեամբ ո՞րն է այդ ժողովուրդը. արդեօք այն մարդիկը, որոնք տասնեակ տարիներ Համոյենց եկեղեցին իրենցն են համարել և միշտ երէցփոխներ ընտրելուն մասնակցել են և այժմեան երէցփոխ պ. Հաքիմեանին ընտրել են, դրանք էլ ժողովո՞ւրդ են կազմում թէ ոչ. չէ՞ որ դրանք այսօր զրկուած են լիշեալ եկեղեցու գործերին մասնակցելուց։ Կամ ժողովուրդ ասելով գուցէ պէտք է հասկանանք միմիայն նորընծայ Սարգիս քահանայ Բէգնազարեանի նոր կազմած ծուխը։ Եթէ այս վերջինն է ժողովուրդը, խօսք չկայ, որ ժողովրդի ընտրութեան իրաւունքը խախտուած է Համոյենց եկեղեցում։

Յիշողութեան տէր ընթերցողը դրա համար չշարժեց իւր գլուխը և չզայրացաւ, այլ նրա համար, որ ժողովրդի ընտրութեան իրաւունքը պաշտպանում է այն թերթը, որ ամենանշանաւոր ժամանակում գտաւ, որ այդ ժողովուրդը (միայն Համոյենց եկեղեցու նորընծայ քահանայի $21\frac{1}{2}$ ծուխը չհասկանաք) սխալուել է և ինքը ժողովուրդը չկարողանալով իւ հարկէ իւր սխալը ուղղել, այդ թերթը բարեբաղդութիւն համարեց, որ առանց ժողովրդի էլ սխալը ուղղուեցաւ։ Ի հարկ է, ինչ կարող էինք ասել և ինչ կարող ենք ասել. իւրաքանչիւր հրապարակախօս, իւրաքանչիւր թերթ կարող է իւր համոզմունքն ունենալ։ Բայց նա, որ ժողովուրդից ընտրութեան իրաւունքը խլում է և այդ բարեբաղդութիւն է համարում նոյն ժողովրդի համար, կարծում ենք, որ նրա համար մի փոքր անյարմար պէտք է լինի Համոյենց եկեղեցում ժողովրդի ընտրութեան իրաւունքի պաշտպանութեան գործը։

Գուցէ մենք սխալւում ենք, բայց թողնենք յիշողութեան տէր ընթերցողին իրեն քննութեան առնելու այդ վարմունքը։

Մենք դառնանք այսօրուայ խնդրին։ Մամուլի մէջ Համոյենց եկեղեցու վէճի առթիւ յայտնուած մտքերի մէջ ամենից աւելի նշանաւորը ժողովրդի ընտրութեան իրաւունքն օրէնքով պաշտպանելու միտքն է։

Օրէնք ասելով չպէտք է հասկանալ մեր եկեղեցական աւանդութիւնները կամ կանոնները, այլ պօլօժէնիան։

Սա նոր տեսակէտ է. նրանք, որոնք իրենց տեսակէտը հարկաւոր են համարում պօլօժէնիայով պաշտպանել և կարծում են, որ յաջողութիւն կունենան, երևի գիտեն, թէ ինչ են անում։ Պօլօժէնիան, այսինքն օրէնքները մէջ տեղ բերելով և ս. Աինօդի իրաւասութեան մասին նկատողութիւններ անելով, յայտնվում է աւելի պարզ այն, ինչ որ մենք վաղուց գիտէինք։

Այդ այն է, որ Համոյենց եկեղեցու վէճը ըստ երևութին երէցփոխի և նոր ծուխի մէջ ընտրութեան առթիւ ծագած վէճ է, բայց իսկապէս նա այնպիսի մի վէճ է, որ այդ եկեղեցու ծուխին և երէցփոխին չէ վերաբերում։

Այդ վէճը ահա քանի տարի է շարունակվում է և մեր եկեղեցական բոլոր գործերը տակն ու վրայ է անում և բոլոր կարգապահութիւն խափանում, փոքրին մեծի դէմ, ստորադրեալին իշխանաւորի դէմ։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՆՆԱ ՍԱՐՈՅԵԱՆ *)

—

ՆԱՄԱԿ ԺԱ.

Թիֆլիս, փետրուարի 10-ին 1881։

Սիրելի Հռիփսիմէ,

Դու էլ ես մեղադրում և չանդիմանում ինձ այն բանի համար, ինչ բանի համար որ մեղադրում և չանդիմանում էր Գրիգորը. նրա ասելով, ես «չատ եմ մտածում»։ Սակայն դու նրանից աւելի խիստ ես դատաքննում իմ այդ վարմունքը, ասելով, որ ես ուզում եմ «աթէիստութիւն» եմ անում, որ ես ոտնակոխ եմ անում ամբողջ մարդկութեան ամենասրբազան, անմերձենալի հաւատալիքն և այդտեղ չլեցնում ես ինձ Պուշկինի «Демонъ» բանաստեղծութիւնը, իսկ ամենից վերջը բերում ես Գեթէի նշանաւոր խօսքերը, թէ՝ «մտածող մարդու ամենամեծ երջանկութիւնն այն է, որ քննելին քննած ունենայ, իսկ անքննելին խաղաղ հոգով պաշտէ»։—Երևակայում եմ, թէ ինչ կը լինէր դատաստանս, եթէ ես ապրելիս լինէի միջին դարերում. անշուշտ Հուսի նման ինձ էլ խարոյկ կը բարձրացնէին։ Քաւ լիցի, քաւ լիցի, սիրելի քոյրիկ։ Լուն ուղտ մի չինէք։ Մինթէ գլխատմա խելք է մնացել, որ արարքներս համար ինքս ինձ հաշիւ տամ։ Ինչի՞ չես նեղի և կահաւորման հետքն անգամ չես կարող գտնել այժմ. դաշնամուրիցս, իմ սիրելի դաշնամուրիցս բռնած՝ մինչև վերջին բազկաթոռը, մինչև լուսամուտի վերջին վարագոյրը—բոլորը վաճառեցին աճուրդով։ Խոհարարի, աղախնի և ծառաների մասին, ի հարկէ, աւելորդ է անգամ խօսել. չունենք գոնէ մի հատիկ ծառայ, որին փողոց ուղարկէինք։ Ամեն բանի մէջ—ուտելում, խմելում, հագնելում սաստիկ խնայողութիւն ենք անում, անում հնք Հարահատեալ։ Էլ չեմ գրում, թէ այդ բոլորը որքան զգալի է մեզ համար, դու ինքդ էլ կարող ես երևակայել... Ցանը գտնուած աւելորդ օսիդէն և արծաթեղէնն արդէն սկսել ենք վաճառել։ Առաւելապէս մեզ քանդում են բժիշկները վարձն և դեղօրայքը։ Գոնէ դրանից մի զգալի օգուտ լինէր հօրս կամ եղբօրս։ Ահա ամբողջ չորս ամիս է, ինչ այդ բժիշկները չանասկրութեամբ յաճախում են մեր տուն և, չնայելով դրան, հօրս դրութիւնն այժմ էլ հարատեւ թէ նոյնն է, ինչ որ առաջ, իսկ Գրիգորի առողջութիւնն, ընդհակառակն, օր օրի վրայ ետ ու ետ է գնում...

Էհ, բժիշկներ ասացի, միտս եկաւ։ Անցեալ անգամներում (այդ մասին, կարծեմ, քեզ չեմ գրել) հօրս բժիշկը—X-ը (դու պէտք է որ Հանուածելիս լինես այդ պարոնին) դառնում է մեզ և ասում է Թագուն, որ հօրս այլ ևս ոչինչ չի օգնիլ և ի զուր հմմ նա է խնդրին։ Ամմուլի մէջ Համոյենց եկեղեցու վէճի առթիւ յայտնուած մտքերի մէջ ամենից աւելի նշանաւորը ժողովրդի ընտրութեան իրաւունքն օրէնքով պաշտպանելու միտքն է։

Օրէնք ասելով չպէտք է հասկանալ մեր եկեղեցական աւանդութիւնները կամ կանոնները, այլ պօլօժէնիան։

Սա նոր տեսակէտ է. նրանք, որոնք իրենց տեսակէտը հարկաւոր են համարում պօլօժէնիայով պաշտպանել և կարծում են, որ յաջողութիւն կունենան, երևի գիտեն, թէ ինչ են անում։ Պօլօժէնիան, այսինքն օրէնքները մէջ տեղ բերելով և ս. Աինօդի իրաւասութեան մասին նկատողութիւններ անելով, յայտնվում է աւելի պարզ այն, ինչ որ մենք վաղուց գիտէինք։

Այդ այն է, որ Համոյենց եկեղեցու վէճը ըստ երևութին երէցփոխի և նոր ծուխի մէջ ընտրութեան առթիւ ծագած վէճ է, բայց իսկապէս նա այնպիսի մի վէճ է, որ այդ եկեղեցու ծուխին և երէցփոխին չէ վերաբերում։

Այդ վէճը ահա քանի տարի է շարունակվում է և մեր եկեղեցական բոլոր գործերը տակն ու վրայ է անում և բոլոր կարգապահութիւն խափանում, փոքրին մեծի դէմ, ստորադրեալին իշխանաւորի

---

*) Տես «Նոր-Դար» № 79

Ա. Ա. Ա.

ՀԱՅԿԱԿԱՆ ԼՐԱՏՎԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

Ի ՀԱՐԿԱՎՈՐՈՒԹԻՒՆ ՀՐԱՏԱՐԱԿՉԱՑ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ

Ի ՊԱՏԻՒ ՀԱՅ ՄԱՄՈՒԼԻ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԱՍԻՐՈՒԹԻՒ

մէջ մի սրբանական և ընկերական հաստատութիւնը քանի տարի է, որ բացակայում է, քանի որ ժողովրդի մեծամասնութեան յայտնի չէ այդ նոր կարգադրութիւնը և վերջապէս քանի որ մեր եկեղեցու ընտրողական սկզբունքը տալիս է ժողովրդին ինքն իրեն համար քահանայ ընտրելու իրաւունքը։ Պարզ է,որ այդ դժուարութիւններին յաղթելու և վեհափառի կարգադրութեան իրագործելու համար,նախապէս հարկաւոր էր հայրապետական կոնդակի բովանդակութիւնը և վեհափառ Հայրապետի բարի դիտաւորութիւնը բացատրել բոլոր եկեղեցիներում ի լուր ժողովրդեան և օրագրերի և լրագրերի միջոցով հրատարակել և, որ գլխաւորն է, տեղական հոգևոր վարչութիւնը պէտք էր նախապէս ժողովրդի ազդեցիկ դասերի հետ խորհուրդ կազմէր, վեհափառի ցանկութիւնը արձարծէր ժողովրդի ամեն դասակարգերի մէջ, որպէս զի ժողովուրդն ըմբռնէր նոր կարգադրութեան բուն նպատակը և այդպիսով դիւրութեամբ իրագործուէր հատատարամտան ծխաբաժանութիւնը։ Ցաւով պէտք է ասենք, որ այդ կողմից ոչինչ չեղաւ. Ճշմարիտ է,ինչպէս լսել ենք, հոգևոր վարչութեան կարգադրութեամբ ծխաբաժանութեան համար թէև չանձնաժողով է կազմուած, արդէն մի քանի եկեղեցիների ծուխերը միարան քահանայից մէջ հատատարամտան բաժանուածեն,բայց այդ ըստ երևոյթին այդպէս է, լոկ ցուցակները վրայ են ծուխերը բաժանուած։ Զատկի տօնի հնչեցին, որ վեհափառի կոնդակը անյայտ է մնացել ժողովրդին և գործ չէ դրուել։ Քահանաներից մի քանիսը՝ հարուստ բարձր հոգևոր իշխանութեան կարգադրութեան, հովուել են, ոչ թէ միայն նոր ցուցակով իրենց վիճակուած ծուխերը, այլ և իրենց նախկին ծուխերից, իրենց ընկերներին յատկացրած ծուխերն էլ, և միևնոյն ժամանակ դրգռել են ծուխերին իրենց ընկերը և միարան քահանաների դէմ, որպէս պիտ չ'ընդունեն իրենց միարան ընկերին։

Անհոգութիւն ծխաբաժանութեան գործը ծածկելու հետևանքն այն է լինում, որ դարձեալ քահանաներից միայն, «Աբարատի» խօսքով ասենք, «Ճարպիկը, խորամանկը և մարդահաճը է ուելի չահվում, որը բացի ծուխ յաւելտահելուց ոչինչ բանի ընդունակութիւն չունի, մինչդեռ համեստը, ամաչկոտը, անձնական պատիւը պահպանողը միշտ զրկուած պիտի է լինի, ինչպէս սովորաբար տեսնվում է»։

Մենք վերևը յիշեցինք, որ վեհափառի շրջաբերական կոնդակը իւր նպատակին չէ հասնում, այսինքն նպատակին հասնելու դրական միջոցները չեն գործադրուած և չեն գործադրվում։ Դրա հակառակ, մի դիւթական ձեռք միշտ աշխատում է բարձը հոգևոր իշխանութեան բարի նպատակները հարուածել և բարձրից եզած յարգադրութիւնները վոխանակ ի կատար ածելու, առաւել ևս խճճել։ Ի հարկէ, այսպիսի անախորժ և տարօրինակ գրութեան հետևանքն այն է լինում, որ նսեմանում է բարձը հոգևոր իշխանութեան հեղինակութիւնն և նրա ընդհանուր իրաւասութիւնը և քահանաների ու ժողովրդի սերտ կապը Ս. Աթոռի հետ թուլանում է և գայթակղութեան և ըմբոստութեան մեծ ասպարէզ է բացվում։ Վեհափառի շրջաբերական կոնդակը ստացուել է կոնսիստորում անցեալ 1887 Դեկտեմբերին. ժողովուրդը նրանից տեղեկութիւն չունի, միայն Հաբասի քահանաները, որոնց ծուխերի Թիւը կրկնապատիկ աւելի է քան Թէ իրենց ընկերներինը, այդ նոր կարգադրութեան մասին տեղեկանալով վաղօրօք գնում են և իրենց ծուխերին քարոզում են ընդդիմանալու նոր կարգադրութիւններին, ասելով, որ նոր կարգադրութիւնը միմիայն ձեռի համար է և Թէ իւրաքանչիւր մարդ իրաւունք ունի ուզած քահանային ընտրելու։

Այսպէս նոր ծուխերը ստացող քահանան երբ գիմում է դրանց և յայտնում նոր կարգադրութիւնը, ստանում է հետևեալ պատասխանը. «Հոգևոր իշխանութիւնը մեզ ոչինչ չէ յայտնել, մեզանից ոչինչ չեն հարցրել, ինչու են նոր քահանայ նշանակում, մենք մեր քահանան ունինք, առաջնորդը մեզ ասել է, Թէ ում կամենանք նրան կարող ենք մեզ քահանայ նշանակել տալ. հոգևոր իշխանութիւնը այդտեղ գործ չունի...»

Որքան Հնչմարտութիւն են պարունակում իրենց մէջ այդ տողերը, այդ չգիտենք, միայն իւրաքանչիւր հասկացող մարդու համար պարզ պէտք է լինի, որ կոնդակի բովանդակութիւնը բոլորովին այլ է և այդ կոնդակն է, որ մինչև օրս եկեղեցիների մէջ չէ կարզացուել և նրա մէջ արած կարգադրութիւնները կատարելու համար հարկաւոր չանքը չէ գործ դրուել։ Այս հակառակութիւններին մէկ վերջ պէտք է տրուի։

Այս գրութեան վրայ հրաւիրում ենք ում հարկն է, ուշադրութիւնը։

Մխակն

Թիֆլիս, մայիսի 16.

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԵԿԱՏԵՐԻՆՕԴԱՐ, 30 ապրիլի.—Մեր հասարակական գործերն օր օրի վրայ խառնիճաղանճ կերպարանք են ընդունում, որովհետև կան մարդիկ՝ որոնք իրենց «ես»-երը ցոյց տալու համար խառնվում են, խօսում, դատում են այնպիսի ժողովրդական գործերի մէջ, որոնց մասին գաղափար անգամ չունեն և ուրիշներին էլ քար գայթակղութեան են լինում։ Եթէ խելքն ու գիտութիւնը փոդի չէջ լինէին, ապա ուրեմն մեզանում պարոն Սքօռնեաքովի տունը անշուշտ կը լինէր ամենից լսելօքը, քանի որ շատ փող կայ մէջը՝ կայսերական բանկ լինելու պատճառով։ Ահա ժողով է լինում, մէկ էլ տեսաք փողաւոր մի պարոն տեսնելով, որ իւր առաջ խօսողին չէ կարողանում յաղթել իւր բոլոր կոպէկների զօրութեամբ, ուրեմն չէ կարող իւր սահմանեալ նպատակին հասնել, ուստի յանդգնաբար գոռում է՝ «դուն ոչ ես, ես քեզի իրաւունք պիտի չեմ տամ հետս կռուելու. ադէկ է վոր ամեն խորթ երեսն տեղը կնստայ»։

Այդպիսի ագէտ երևոյթների շատ օրինակներ կան դժբաղդաբար։ Բացի այդ, զրաբանութիւնների և բամբասանքի ախտը հետզհետէ տարածուելով արմատներ է ձգում մեզանում. «փէչան մարդու շորը հին է, մօտնի չէ, այս ինչը շուտիա չունի որ դուրս չէ գալիս, փէչան վարժապետը զալիվատ կանչ մազերը ածի կօտոչի պէսնակ, ասկից պաշխա տահա բան կինաէ վոր։ Հանիկս խտա աղջկիկը սիռուշնիլ կը կոտռտվի երևն լուզուն չիտէ, օտար լուզուեով լամատցա կըլլայ. փէչան մատամը այնքան կարմիր պօչեա քըսել է էսէսին, վոր քըսընած ժամանակը պօչեան քրտինքին հետ կը կաթկըթի ու հալուը կաճըռէ...

Այսպիսի հազար ու մի տեսակ դարձակախօսութիւնները, կարծես Թէ գործ չկայ, որի վրայ խօսէին։ Մեծ պատճին մեր երկու տիրացուներից մէկին, գիւղերը գնաց տէրտէրի հետ, մնաց մի տիրացու, որ հարկաւ Թէ սպասաւորութիւն պիտի անէր և Թէ դպրութիւն. ուստի Ծերունի քահանան Հարթահատ դպրութիւն էր անում։ Ահա Աւետեաց տօնի օրը՝ երբ մեծ բազմութիւն է լինում եկեղեցում, չգիտէին Թէ ով պէտք է դպրութիւն անէր այդպիսի հանդիսաւոր օրը. Ծխական ուսումնարանի ուսուցիչը, որ Ներսիսեան Դպրոցի հինգերորդ դասարանից է էր գիտէ ձայնագրութիւն, ուրեմն և եկեղեցական-հոգևոր դպրոցը չունի երգեցիկ խումբ, մինչդեռ եկեղեցին Թէ իւրապատկան տների արդիւնքով և Թէ վողով աւելի քան հազար ռուբլի տալիս է դպրոցին, իսկ ուսումնարանը մի քանի երգեցող տղաները չէ կարողանում տալ եկեղեցուն։ Աւելորդ եմ համարում լաւ երգեցողութեան մեծ նշանակութեան մասին խօսել, քանի որ պարզ է և շատ անգամ գրուած է սրա մասին մամուլի մէջ։ Աւետեաց տօնի օրը օրչափ մեծ եղաւ ամենքիս ուրախութիւնը, երբ ուսուցիչ պ. Մելիքեանց, որ Հեմարանի աշակերտ եղած է և մի քանի տարի էլ երգեցիկ խմբի մէջ երգել է էջմիածնում երջանկայիշատակ Գէորգ կաթողիկոսի օրով, իւր մասնաւոր դպրոցի աշակերտներից կազմած մի խմբի հետ պատարագի ժամանակ դպրութիւն արեց։ Պատարագից վերջ, ինչպէս աշխատասէր երէցփոխան պ. Մելքայէլ Քարասուհեանց, հոյնպէս և հասկացող դասը ժողովրդեան երևոյթը շնորհակալութիւնը մատուցին պ. Մելիքեանցին։ Գ. Մելիքեանցն իւր խմբի հետ դպրութիւն արեց դարձեալ Լուսաւորչի տանը, Ծաղկազարդին, Ձրագալոյցի և Սուրբ Յարութեան օրերին պատարագների ժամանակ. Ձրագալոյցի երեկոեան չիշեալ խմբից մի քանիսը բաշձրացան սեղան կարգացին Դանիէլ մարգարէի գիրքը, որ շատ գեղեցիկ և յարմարաւոր եղաւ։

Ա.

ԲԱԳՈՒ, 18 մայիսի.—Մայիսի 14-ին, շաբաթ երեկոյեան քաղաքիս մայր եկեղեցում սրբ. Մեսրովբ Աբգեպալիսկոպոսը մի համառօտ ճանուցումով հրաւիրեց քաղաքիս հայ հասարակութեանը հետևեալ օրը, 15-ին, Ս. Պատարագից յետոյ հաւաքուելու «Մարզ. Ընկերութեան»դահլիճը ծխական հարցի մասին խորհրդակցելու համար։

Այս հրաւէրի համաձայն, հետևեալ օրը ահագին բազմութիւն էր հաւաքուած դահլիճը, բայց որքան մեծ եղաւ այդ բազմութեան զարմանքը՝ երբ լսեց, որ Գեր. Մեսրովբ Աբգեպալիսկոպոսը մի նոր ծանուցումով յիտաձգեց ժողովը երեքշաբթի օրուայ համար, ամսի 17-ին։ Այդ օրը հրաւիրուած էին 400 անձեր առանձին և յատուկ հրաւիրագրերով։ Մի համառօտ յորդոր տալով ժողովականներին սիրոյ և միաբանութեան մասին՝ սրբ. Առաջնորդը նիստը բացեց հետևեալ բառերով. «Սիրելիք, ձեզ հրաւիրել եմ ծխի մասին խորհրդակցելու համար։ Դուք գիտէք, որ ձեր քաղաքում ժողովուրդը ծխի վերաբաժանուած չէ, ինչպէս որ այդ Հայաստանեայց եկեղեցու կանոնն է ու ինչպէս ամեն տեղ ընդունուած է։ Պէտք է գիտենաք, որ ծխաբաժանութիւնը օգտակար է Թէ ժողովրդեան և Թէ քահանայից համար, բայց մանաւանդ ժողովրդոց համար։ Այս ծխաբաժանութեան լաւ կողմն է ահա.—Բայց ծխաբաժանութիւնը վատ կողմն էլ ունի, այն է, որ դրանով հասարակութիւնը միմեանցից կը բաժանուի, իսկ բաժանումը առհասարակ լաւ բան չէ։ Հիմայ դուք գիտէք, սիրելիք, ուզում էք բաժանեցէք, չէք ուզում մի բաժանէք։ Բայց եթէ ուզում էք բաժանել, այս կերպով պիտի լինի։ Այսչափ բազմութեամբ դժուար է խորհրդակցել ծխաբաժանման օգտի կամ վնասի մասին, ուստի Թող բազուցիք, ղարաղաղցիք և չամախեցիք իրենց մէջից 10-ական մարդ ընտրեն, 10 մարդ էլ գանձակեցիք ու Թիֆլիսեցիք ընտրեն, ընդամենը 40 մարդ։ Ես դրանց հետ կը խորհրդակցեմ և ծուխը կամ կը բաժանենք կամ ոչ։»

Երբ Սրբազանը վերջացրեց, ժողովում եղող 8 բազուցիք խնդրին առանձնացան իրենց մէջից 10 մարդ ընտրելու։ Իսկ ժողովականներից մինը բոլորովին իրաւացի կերպով նկատեց, Թէ որովհետև բազուում եղող Թէ բնիկ և Թէ օտարերկրացի հայերըն եղբայր են և կազմում են մի մեծ ծխական համայնք, ուստի հարկ չկայ բազուեցու և ուրիշ տեղացիների մէջ խտրութիւն դնել, այլ ամենաւաւ և ամենից արդար ձևն այն է, որ ներկայ 400 անձերն իրենց մէջից ընտրեն 40 մարդ և հարցը վերջանայ։ Այս առաջարկը միահամուռ ընդունուեցաւ, բայց բազուցիներն և Սրբազանը չհամաձայնեցան։

Նկատողները եղան, որ սրբազանի առաջարկած ձևի մէջ մինչև անգամ անարդարութիւն կայ, որովհետև 700 տուն ղարաբաղցիներն և 400 տուն չամախեցիներն էլ 10-ական մարդ պէտք է ընտրեն, և 24 տուն բազուցիներն էլ 10 մարդ։ Բայց սրբազանը անուշադիր Թողեց և այդ նկատողութիւնը։

Շատերը նկատեցին, որ ներկայ ժողովը կազմելիս՝ սրբազանի իսկական նպատակը ոչ Թէ ծխական հարցն է, այլ տիրացու Համբարձումի ձեռնադրութեան հարցը։ Ցայտնի է, որ այդ տիրացուի պաշտպանները բազուցիները են, որոնք իրենց աննման Թուով եթէ օր առաջ չկարողացան Հայների մեծամասնութիւն ձեռք բերել, յետոյ տիրացուի ձեռնադրութեան գործը աջողեցնելու համար։ Այժմ սրբազանի առաջարկած ձևով նրանք 10 Հայն կունենան 40 Հայնի մէջ, և ուրեմն իրը Թէ քաղաքի 4-րդ մասն են կազմում և ուրեմն իրաւունք ունին իրենց համար քահանայ ձեռնադրել տալու։

Այս կարծիքը հաստատուեցաւ նրանով, որ հրաւիրագիրների վերնագրերումը գրուած չէր, որ ժողովը յատկապէս ծխական հարցի համար էր (ինչպէս ասում էր սրբազանը), այլ «մի քանի եկեղեցական գործոց համար»։ Ուրիշները նկատեցին, որ եթէ սրբազանի միտքը, իրաւի, ծխական հարցն է, Թող այստեղ և եթէ և այժմ և եթէ Հայն հաւաքի՝ և եթէ երևայ, որ մեծամասնութիւնը Հակառակ չէ ծխաբաժանութեան, Թող բաժանուի ուրեմն և ընդհակառակն։

Բայց սրբազանը ընդդիմացաւ, պարզ տեսնելով, որ գրեթէ հարցը միաձայն կը վճռուէր յօգուտ ծխաբաժանութեան։ Մինչդեռ Նորին Սրբազնութեան նպատակը իսկապէս այդ հարցը չէր, այլ, ինչպէս ասացինք, տիրացու Համբարձումի ձեռնադրութիւնը։

«Մարդասիրական Ընկերութեան» նախագահ պ. Անտոնեանցը տեսնելով, որ ժողովականների և Մեսրովբ արքեպիսկոպոսի հայեացքների մէջ ոչինչ ներդաշնակութիւն չկայ և Թէ ժողովը կամաց-կամաց ապմկալի կերպարանք է ստանում, հետևեալ միջոցն առաջարկեց, այն է, որ եթէ սրբազանն ու ժողովականները կը բարեհաճեն և իրեն կարտօնեն, նա մի երկու օրից առանձին հրաւիրագրերով և լրագիրների յայտարարութեամբ քաղաքային խորհրդի (Դումայի) ընդարձակ դահլիճը կը հրաւիրէ քաղաքիս ողջ հայ հասարակութիւնը,—և հարկէ ձայն և իրաւունք ունեցողները,—և նրանց գաղտնի քուէարկութեանը կառաջարկի ծխական հարցը։ Եւ այդ քուէարկութեան հետևանքն օրինաւոր արձանագրութեամբ և ժողովականների իսկական ստորագրութիւններով կը ներկայացնէ Սրբազան առաջնորդի անձնաւորութեանը։

Սրբազանը պ. Անտոնեանի այս առաջարկն ընդունեց իւր կողմից։ Ընդունեցին և ժողովականները միաձայն։ Հարցը վճռուեցաւ։ Բայց այդ ժամանակ Դեր. Եպիսկոպոսին տուէն մի կլոտոր Թուղթ, որի վրայ 10 բազուցիների անունները գրուած էին։ Այդ Թուղթը ստանալով սրբազանը հետևեալ յայտարարութիւնն արեց. «սիրելիք, ահա բազուցիք իրենց մէջից 10 մարդ ընտրել են, դէհ դուք էլ ուզում էք հիմի, ուզում էք էգուց հաւաքուեցէք և մնացեալ 30 անձինքը ընտրեցէք և յուցակը ինձ տուէք, որ գործը շուտով վերջանայ։ Ես գործ ունիմ, շտապում եմ Շամախի դառնալ։ Պ. Անտոնեանի առաջարկած ձևը Թէև լաւ է, բայց մի քանի օր էլի կը ետանայ։ Իսկ ես էլ չեմ կարող մնալ Բազուում, ասաց սրբազանն և հեռացաւ։ Եւ իրաւունք ունէր։ Ձմռանից՝ նրա այլ ևս Բազուում մնալը միտք չունէր։

*

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

—Գերմանական Ֆրիդրիխ կայսրի երկրորդ որդու՝ պրինց Հէնրիխի պատկառելութիւնը հիւսիսեան պրինցէսներին հետ կայացել է Հանդիսաւոր կերպով մայիսի 12-ին, համաձայն որոշուած կարգերին։ Ժամը 11-ին Շարլոտէնբուրգի պալատը սկսում են հաւաքուել բարձր հիւրերը։ Ուղիղ կէս օրին կատարվում է պսակի եկեղեցական արարողութիւնը, որին ներկայ է եղել Ֆրիդրիխ կայսրը։ Նամաճաշից յետոյ, ժամը երեքին նորապսակները ուղևորում են Լամանսդօրֆ։

—«Kölnische Zeit.»-ին վիեննայից հաղորդում են, որ աւստրիական Ֆրանց-Յոզէֆ կայսրը մտադիր է այցելելու իտալիան Հումբէրտ Թագաւորին՝ Բոլօնիում, զօրահանդէսների միջոցին։ Կայսրը ծովով կուգևորի Անկոնա և այնտեղից էլ երկաթուղով Բոլոյն։ Սակայն «Neue Freie Presse»-ը հերքում է այդ լուրը։

—Կ. Պոլսից հեռագրում են, որ անգլիական դեսպան սեր Ուայտը աշխատում է Թիւրքիայի հետ դաշնակցութիւն հաստատելու։

—Ընդարձակ «Pesther Lloyd» և «Nemzet» Թերթերը Գերմանիային խորհուրդ են տալիս պատերազմ հրատարակել. նրանք միևնոյն ժամանակ էլ աւելացնում են, որ Աւստրիա-Ունգարիան կաջակցի նրան։

—«Kölnische Zeit.»-ին վիեննայից հաղորդում են, որ աւստրիական Ֆրանց-Յոզէֆ կայսրը մտադիր է այցելելու իտալիան Հումբէրտ Թագաւորին՝ Բոլօնիում, զօրահանդէսների միջոցին։ Կայսրը ծովով կուգևորի Անկոնա և այնտեղից էլ երկաթուղով Բոլոյն։ Սակայն «Neue Freie Presse»-ը հերքում է այդ լուրը։

—Կ. Պոլսից հեռագրում են, որ անգլիական դեսպան սեր Ուայտը աշխատում է Թիւրքիայի հետ դաշնակցութիւն հաստատելու։

—Ընդարձակ «Pesther Lloyd» և «Nemzet» Թերթերը Գերմանիային խորհուրդ են տալիս պատերազմ հրատարակել. նրանք միևնոյն ժամանակ էլ աւելացնում են, որ Աւստրիա-Ունգարիան կաջակցի նրան։

—Վիեննայի քաղաքական շրջաններում խօսում են, որ գրաֆ Կալնոկիին խորհուրդ է տուել Սերբիայի Միլան Թագաւորին մաս առ մաս զինել, պատերազմական դրութեան մէջ պնել իւր բանակը, եթէ Սերբիայի հարաւարևելեան կողմում խռովութիւնները կը սաստկանան։ Նոյնպէս լուրեր են տարածուած, Թէ գրաֆ Կալնոկիին ազդեցութեամբ, Սերբիան և Բոլղարիան մօտ ժամանակներս գաշնակցութիւն կը հաստատեն Բալկան Թերակղզում ծագելիք խռովութիւնների միջոցին համերաշխ գործելու նպատակով։

—Անգլիական լրագրները իրարից լուր հաղորդում են, որ Թիւրքիան մրտադիր է եղել իւր զօրքերով գրաւելու Աբեսինեան Բումբէյան։ Այդ պատճառով, «Daily News»-ի ասելով, աւստրիական կառավարութիւնն իրան Թէ բողոքել է դրա դէմ և յայտնել է, որ այդպիսի դէպքում միջոցները կը ձեռնարկէ Բոլղարիայի պաշտպանութեան համար և մինչև իսկ գուցէ և իւր զօրքերով գրաւէ Բոլղարիան

ՍՊԱՆԻԱ.—«Նոր-Դար»-ի ստացած հեռագիրներից արդէն յայտնի է, որ Սպանիայի Բարցէլօն քաղաքում այս տարուայ մայիսի 21 բացուեց ցուցահանդէս։ Ցուցահանդէսի բացման նախընթաց օրը 4000-ից աւելի հրաւիրատոմսեր ուղարկուեցան. բացման ներկայ էր դիպլօմատիկական ամբողջ կօրպուսը, նոյնպէս և ուրիշ պետութիւնների նաւատորմիղների ծովապետներն և սպաները։ Նախ և առաջ ցուցահանդէս եկան օտարազգի պրօվինցներն իրենց հետևօղներով՝— Էդինբուրգեան հերցօգը, Ոէյլսի պրօվինց Գէօրգը, Գէնուայի հերցօգը և Բաւարիայի պրինցը։ Այդ բոլոր մեծօցն երաժշտական խումբն ածում էր «մարշ-ինֆանտա», Սպանիայի ազատական տան հիմնադրը Սպանական Թագուհի-խնամակալուհին ցուցահանդէս եկաւ բաց կառքով՝ Ալֆոնս XIII Թագաւորի հետ միասին, որ նստած էր դայեակի ծնկներին. Թագուհուն դիմաւորեցին տեղական վարչութիւնները, ցուցահանդէսի չանճնաժողովի անդամները։ Թագուհի-խնամակալուհին իւր որդուն՝ Սպանիայի մանուկ Թագաւորին նստեցրեց բազկաթոռներից մինի վրայ, իւր կողքին, իսկ նրա քոյրերին՝ նրա ոտների մօտ, մինչդեռ ինքը ամբողջ հանդէսի միջոցին կանգնած էր։ Եկու ճառ լսուեց. մինը լսուեց Բարցէլօնի քաղաքապետը, միւսը կառավարչական կօմիսարը, որից յետոյ մինիստրների խորհրդի նախագահ պ. Սագաստան Թագուհու անունով ցուցահանդէսը բացուած հրատարակեց։ Այն ժամանակ նուագածուները նուագեցին միւս ազգերի հիմները, իսկ Թագուհին պրինցների և իւր հետևօղների ուղեկցութեամբ շրջեց ցուցահանդէսում։

Բարցէլօնի ցուցահանդէսի բացման առթիւ եւրօպական բոլոր մեծ պետութիւնները և Ամերիկայի Միացեալ-Նահանգները Բարցէլօնի նաւահանգիստն ուղարկեցին իրենց մարտանաւերից մի քանիսը։ Այդ բանը խիստ չոյում է հպարտ սպանացիների ինքնասիրութիւնը. և իրաւ, շատ քիչ նաւահանգիստ է արժանանում այդպիսի պատուի։ Սպանական լրագիրները ասում են, որ ուրիշ պետութիւնների նաւատորմիղների ներկայութիւնը ապացոյց է այն մեծ համակրութեան, որ տածում են նրանք դէպի Սպանիան։ Սպանական սենատը որոշեց միաձայն, որ շնորհակալութիւն յայտնեն բոլոր պետութիւններին այդ բանի համար։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

*** Գերմանական կեանք ապահովող ընկերութիւնների հաշուից երեւում է, որ նրանք 1829 թուից սկսած, 700 մլիոն մարկից աւելի ապահովագրած են տուել այրիներին և որբերին։

*** Պարիսի բնական գիտութիւնների մուզէումը կանոնից բերել են մի խոզ, որ վեց ոսկ ունի և երկու հատ էլ մարմնի վերջին մասը։ Զննելով, որ նրա վերջին չորս ոտները բոլորովին կանոնաւոր են, բայց և այնպէս չէ կարողանում մանգալ, այլ սողալով է մանգալիս։

* *

Աբաթ մօր խորհուրդն իւր աղջկան.— Երբ արաբուհին-մայրն ամուսնացնում է իւր աղջկան, նորապսակների իւր տնից հեռանալու մինչոյն իւր աղջկան տալիս է հետևեալ խորհուրդները. «դու այժմ Թողնում ես նրանց, որոնցից ծնուել ես. դու այժմ հեռանում ես այն բունից, որ այսքան ժամանակ պահպանում էր. դու նրանից Թռչում ես՝ կեանքը սովորելու համար, և դու այդ անում ես անճնաուր լինելու համար մի մարդի, որին դու չես ճանաչում, որի ընկերակցութեան դու սովոր չես։ Խորհուրդ եմ տալիս քեզ նրա գերին դառնալու, եթէ ուզում ես, որ նա քո ծառան դառնայ։ Բաւականացիր քչովի։ Անդադար հսկիր այն բաների վրայ, որ պիտի տեսնեն նրա աչքերը և ջանայ, որ նրա աչքերն երբէք վատ վարմունքդ չտեսնեն։ Հսկիր նրա քնի, նրա կերակրի վրայ. քաղցը դիւրագրգիռ է դարձնում մարդին, անքնութիւնը՝ հոգու վատ տրամադրութիւն է առաջացնում։ Հոգս տար նրա սեռականութեան մասին. լաւ վարուիր նրան մօտիկ անձերի հետ։ Համբ եղիր նրա գաղտնիքի համար։ Երբ նա տխուր է՝ ուրախ մի երևալ, և ոչ էլ տխուր եղիր՝ երբ նա ուրախ է։ Այն ժամանակ Աւլտհը կ'օրհնէ քեզ»։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի

ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԴՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՎԵՆՆԱ, 20 Մայիսի.—Այստեղի լրագիրները քննելով Մեծ Իշխան Պաւէլ Ալէքսանդրովիչի գնդապետութեան աստիճան ստանալը, այս դէպքի մէջ տեսնում են Ռուսիայի և Աւստրիա-Ունգարիայի փոխադարձ յարաբերութեան համար մխիթարական նշան։

ՊԱՐԻԶ.—Երէկ երեկոյեան, ռուսական դեսպան բարօն Մ'օրնհէյմըն ի պատիւ հասարակապետութեան նախագահ Կարնօին ճաշ տուեց։ Ճաշից յետոյ խիստ շքեղ ընդունելութիւն եղաւ, որի համար եկած էին դիպլօմատիկական ամբողջ խումբը և բարձր պաշտօնական անձեր։ Դեսպանութեան պարտէզը շքեղօրէն լուսաւորած էր։

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—

Մ ե ր վ, Ա. Ց. Մ.-ին.—Դրուած էք, որ անցեալ տարուայ Նոյեմբերի 11-ին Աբ. Մեհրաբեան կրող հասցէով մի ծրարի մէջ 4 բուբլի էք ուղարկել և խնդրել նրանից, որ իւր գրաւճառանոցից ուղարկէ ձեր ուզած գրքերը։ Մեզ յայտնի չէ թիֆլիսում այդպիսի գրաւճառ և չգիտենք էլ, թէ մեզ չվերաբերող գործի մասին մենք ինչ կարող ենք անել։

—

Ն ո ր-Բ ա յ ազէդ, Տեղացուն.—Ձեր գրածը լեցկենգեան է, բայց լեցկենգեան էլ պէտք է հիմնուի փաստերի վրայ, և անշուշտ դուք այդ փաստերն էլ կունենաք, ուստի աւելի յարմար չէ՞ լինիլ, եթէ մենաշնորհը կրկին գրելու նեղութիւն քաշէիք՝ միայն օրինակները և փաստերը էլ առաջ բերելով։

—

Է ր զ ր ու մ, Կ.-ին.—«Նոր-Դար»-ը ուղարկվում է ուսումնարանի հասցէով՝ ուսումնարանի համար. կարող էք ապահով լինել։

—

Ա յ ն թ ա պ, Պ-ին.—Ձեր յիշած նամակը չէ ստացել խմբագրութիւնս։ Խմբագրութեանս ջանքերից մինն էլ նոր այժեր առաջ քաշելն է։

—

Գ ե ր մ ա ն կ ա, Հ. Ձ-ին.—Մինչև Ձեր ուղարկած յօդուածի հրատարակուելը. մի սպասէք. խնդրում ենք շարունակեցէք։

—

Կ. Պ օ լ ի ս, Ք.-ին.—Ձեր յօդուածը չանձնեցինք մեր և Ձեր բարեկամ Տ.-Մ.—ին։

—

Բ ա գ ու, N.-ին.—Դուք կարծում էք, թէ «Նոր-Դար»-ին Թղթակցելու կամ լուրեր հաղորդելու իրաւունք չունէք։ Սխալւում էք. ամեն մարդ իրաւունք ունի թղթակցելու և լուրեր հաղորդելու, եթէ կարող է. բայց նրանից ընտրութիւնը, ի հարկէ, միշտ խմբագրութեան ձեռնին է, և ինչ որ կարեւոր է և յարմար է գտնում, այն է հրատարակում։

—

Հ ե ն-Գ ր ի մ, Ճանապարհորդին.—Ձեր յօդուածը անկարող ենք հրատարակել մեզանից անկախ պատճառներով։

—

Կ. Պ օ լ ի ս, X-ին.—Գանգատւում էք, որ Ձեր թղթակցութիւնները չեն հրատարակվում. և դուք էք կարծում, թէ խմբագրութիւնս սկզով չէ կարդում նրանց։

—

Ե ր և ա ն, Վ.-ին—Քանի կարելի է պէտք է կարճ և ամփոփ գրել թղթակցութիւնները, և այն ժամանակ կարող ենք հրատարակել նրանց։ Երկար ու բարակ գրելու սովորութեամբ մեզանում վարակուած են շատերը. հարկաւոր է գրել հակիրճ։

—

Թ ի ֆ լ ի ս, պ. Գ. Մ.-ին.—Դուք հեռանում էք հայոց մամուլին և զգացուել էք, թէ ընչպէս այս վերջին երկու շաբաթում մի առանձին յարձակումներ չեն եղուում «Նոր-Դար»-ի դէմ, ի հարկէ անձնական հայհոյանքներով, արձակ կամ ոտանաւորով...։ Համբերութիւն, պարոն, այսօր եթէ չլինի, վաղն կը լինի. կենդանինեղով եթէ չվարզացան բան չինել, գուցէ մեհեաններն անունով աղմուկ բարձրացնելով մի բան անեն, վնասեն... ինչո՞ւ զրկել դրանց այդ սեռակ զուարճութիւնից. համ կրենք երբեմն գօրձողները կը յայտնուին, համ էլ ընից բանի տեղ չդնող Թերթին վնասած կը լինեն. քիչ բան չ՞։

—

Բ ագ ու, Խանդազէ.—Ձեր երկու լուրերը չհրատարակուեցան, կը հասկանաք պատճառը. դրանց մասին «Նոր-Դար»-ը լսեալ է արդէն և իւր կարծիքը յայտնել։

Խմբագիր-Հրատարակիչ

ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Տպագրութեան համար բոլորովին պատրաստ է և շուտով մամուլի տակ կը մտնէ՝

ԲՆԱԿՈՐՈՒԹԵԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ

հեղ. Անդրէաս Գաբրիելի-ի, Բաբլի-ի արքայական արուեստագիտական ճեմարանի իտալական գրականութեան պրօֆէսսորի, թարգմ.

Գրիգոր Նահապետեանց։

10—10

Մարմնի մասերի, մանաւանդ ոտի մատների փտուկի դէմ

ԳԱՅԼՄԱՆԻՆԸ

Գտնուում է դեղատներում, նոյնպէս և դեղավաճառների մօտ Եւրոպայի նշանաւոր և Ռուսիայի բոլոր քաղաքներում։ Գլխաւոր դէպօն գտնուում է վաճառատան մէջ՝ Հնարողի մօտ, դեղատնտես Գ. Ա. ԿԱՐՊԻՆՍԿՈՒ մօտ, էչմիածնայ փողոց, № 39։ Մեծ տուողով Գայլմանինը վաճառում արժէ 50 կոպէկի, փոքրը 30 կոպէկի։

ՊԱՏՏԻ Է ԽՈՑՍ ՏԱԼ ԿԵՂԾԻՑ

և պահանջել, որ իւրաքանչիւր տուփի վերայ գտնուի գործադրութեան բացատրութիւնն ու Պարիզի ցուցահանդէսի մեդալները։

ԻՍԿԱԿԱՆ Է ԴՈՐ ԾԱՐԱՆԻ ԱՑՍ

ԴՐՈՇՄՈՎ ՄԻԱՑՆ

ՄԻ՛ ՀԱՋԻՐ

Մեղրա-Բուսեղէն-Մայլց-Եկսարատ և չաքարեղէնները։

Լ. Գ. ՊԻՇՏ ԵՒ ԸՆԿ. ԲՐՅՍԼԱՎՈՒՄ

Գ ի ն ն է,—մէկ շիշը 1 բ. 25 կ. և 2 բ. 40 կ. չաքարեղէնները 30 և 50 կոպէկ։

Գլխաւոր պահեստն է Ռուսիայի համար՝ Պետերբուրգ, վ. Աուրլնի մօտ, Բոյլշ. Մօրսկայա, № 17.

Վ ա ճ ա ռ վ ու մ է,—թիֆլիսում, դեղատնային ապրանքների վաճառման Կովկասեան ընկերութիւն, և վ. Գրիմլնակ։ Ձանապարհածախսը առանձին

(M. 4852) 32—30

№ 75

ԻՍԿԱԿԱՆ ԴԱՆՁ Է

Մասւորը, բարոյական աիսի և անբարոյականութեան զոհերի համար

ԻՆՔՆԱՊԱՀՊԱՆՈՒԹԻՒՆ

Հեղ. գօկտօր ԲԵՏՄՈՒՒ

Ռուսերէն հրատարակութիւնը երեք գծագիրներով է և գինը 1 բուբլի։

Թող այս գիրքը կարդայ ամեն ոք, որ վերոյիշեալ աիսին ունի. նա շատերին փրկել է յայտնի կորուստից։

1 բ. ապանոյնա պէս գրէք հրատարակիչ Ր. Ֆ. Ռիրեյչ Մագազինը Լայպցիգում՝ ուղարկում է գիրքը։ (Հասցէն. R. F. Kerliey's Yerlags-Magasin in Leipzig).

(M) 50—10

ՌԻՒՀԿ ՄԻՍԱՐ ԵՐԱՄԵԱՆՑ

ՍԱԼԻԱՆԻՑ ԷՋՄԻԱԾԻՆ

Նկարագիրը

ՈՒԽՏԱՒՈՐ ՈՒԴԵՒՈՐՈՒԹԵԱՆ

Բաղմաթիւ փոխադրութիւններով

Գինն է 50 կոպէկ

Դիմել «Նոր-Դար»-ի խմբագրութեան։ (Ս.) Ռ—19

„ՔՆԱՐԻԿ ՄԱՆԿԱԿԱՆ“

27 ՀԱՏ ԸՆՏԻՐ ԵՐԳԵՐ

ԴԱՇՆԱՄՈՒՐԻ ՀԱՄԱՐ

Վաճառվում է «Կենգրոնական», Սուզանաճեանի, Լանկօի, կիրբերի և միւս գրավաճառանոցներում։

Գինն է 1 բ. 50 կ. 10—1

ԿՕՆԴԻՏԵՐԻԱ ԵՒ ՀԱՅԱԳՈՐԾԱՐԱՆ

ՊԵՏՐՈՍ ԻՒԶԲԱՇԵԱՆԻ

Երևանեան հրապարակի վերայ

ԹԻՖԼԻՍՈՒՄ

Պատրաստի ունի ամեն օր նոր և թարմ ԿՕՆՖԵԿՏՆԵՐ ԼԻ ՏՓՎԵԼԻՍ և ԼԻ ՏՕՂԻՆ ու պօմպոչիա չոչոռած պետութիւններից ԿԱՐԿԱՆԴԱԿ, ՇԱՐՈՒՐԱՀԱՑ, ՅՈՒԿԱՆ, ՏՕՐՏ և ՔՈՂՅՐԱԻԵՆԻՔ ամեն պետութիւն։

Նոյնպէս բազմատեսակ և բազմաձև ՀԱՑԵՐ ԵՒ ՊԱՔՈՒՄԱՔ.

մեծ քանակութեամբ

ՐՕՍՏՕՆԵՕՐ ԸՐԿՂԻԿՆԵՐ

ՓԱՌԱՇԵՆ ԵՒ ԶԱՐԴԱՐՈՒՆ

Ընդունում է պատուէրներ թէ Թիֆլիսում և թէ գաւառներն փոստի միջոցով գներով և կատարում է նրանց ԱՐԱԳ ԵՒ ՃՇԴՈՒՐ ԹԵՄԱՐ։

Այն օտարազգացիների համար, որոնք մեծ չանախութիւնք են պատուիրում, լինում է նշանաւոր զիջում։

Հասցէն՝ Тифлисъ, кондитерская И. Юзбашева.

50—45

Дозволено цензурою. Тифлисъ, 20-го Мая 1888 г.

Տպարան Լ. Գ. Կրամարէնկօյի

Типографія Л. Г. Крамаренко, Гол. пр., д. Читахова.